ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

««ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

Հոդված 1. «Պետական տուրքի մասին» 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 16-րդ հոդվածի՝

1) 36-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«36. «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքով սահմանված կարգով գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցում կատարելու համար՝

1) Անշարժ գույքի նկատմամբ սեփականության, ինչպես նաև անշարժ գույքի նկատմամբ օրենքով նախատեսված այլ գույքային իրավունքների, այդ թվում՝ անշարժ գույքի նկատմամբ գույքային իրավունքների գրավի իրավունքի պետական գրանցում կատարելու (բացառությամբ իրավունքների դադարման պետական գրանցման) համար	չորրորդ աշխատանքային օրը բազային տուրքի 45-ապատիկի չափով	եորրորդ աշխատանքային օրը բազային տուրքի 70-ապատիկի չափով	երկրորդ աշխատանքային օրը բազային տուրքի 95-ապատիկի չափով	երկու աշխատանքային ժամվա ընթացքում բազային տուրքի 170-ապատիկի չափով

2) Նոտարի ծանուցմամբ գույքի նկատմամբ գույքային իրավունքի վերաբերյալ նախնական նշում կատարելու համար	երկրորդ աշխատանքային օրը բազային տուրքի 5-ապատիկի չափով			
3) գրավի առարկայի բռնագանձման գործընթացն սկսելու, դադարեցնելու կամ ավարտելու վերաբերյալ անշարժ գույքի պետական ռեգիստրին ներկայացված տեղեկություններն իրավական կադաստրի տեղեկատվության կազմում արտացոլելու, գրավի առարկայի բռնագանձման գործընթացն սկսելու, դադարեցնելու կամ ավարտելու վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրելու համար	երկրորդ աշխատանքային օրը բազային տուրքի 5-ապատիկի չափով			
4) «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքով սահմանված անշարժ գույքի օբյեկտի գրանցման դեպքում	բազային տուրքի 45-ապատիկի չափով			

անշարժ գույքի օբյեկտի մաս կազմող ամբողջ հաղորդակցության ցանցի կամ դրա մասի, ինչպես նաև անշարժ գույքի օբյեկտի կազմում ընդգրկված և պետական գրանցման ներկայացված անշարժ գույքի յուրաքանչյուր միավորի նկատմամբ մեկ գույքային իրավունքի ծագման, փոփոխման կամ փոխանցման պետական գրանցման համար				
5) անշարժ գույքի միավորի նկատմամբ իրավունքի սահմանափակման դրույթ պարունակող գործարքի, այդ թվում՝ գույքի ձեռքբերման նախնական պայմանագրի հիման վրա սահմանափակման պետական գրանցման համար, բացառությամբ օրենքի ուժով կիրառվող սահմանափակումների դեպքերի	չորրորդ աշխատանքային օրը բազային տուրքի 5-ապատիկի չափով	երրորդ աշխատանքային օրը բազային տուրքի 10-ապատիկի չափով	երկրորդ աշխատանքային օրը բազային տուրքի 15-ապատիկի չափով	երկու աշխատանքային ժամվա ընթացքում բազային տուրքի 30-ապատիկի չափով
36.1. Սույն հոդվածի 36-րդ մասի 1-ին և 5-րդ կետերով սահմանված՝ երկու աշխատանքային ժամվա ընթացքում իրականացվող աշխատանքները կիրառելի են միայն այն դիմումների նկատմամբ, որոնք ներկայացվում են որպես առանձին անշարժ գույքի միավոր գրանցված գույքի նկատմամբ իրավունքների ծագմանը, փոփոխմանը, փոխանցմանն ուղղված գործարքներից ծագող իրավունքների, ինչպես նաև սահմանափակումների պետական գրանցման համար:				

Նշված դիմումները պետք է ներկայացվեն աշխատանքի օրվա ավարտից առնվազն երկու ժամ առաջ:				
36.2. Անշարժ գույքի պետական միասնական կադաստրի տվյալների վերաբերյալ տեղեկություններ տալու համար				
1) անշարժ գույքի միավորի վերաբերյալ միասնական տեղեկանք տրամադրելու համար	երրորդ աշխատանք ային օրը բազային տուրքի 10-ապատիկի չափով	երկրորդ աշխատանք ային օրը բազային տուրքի 20-ապատիկի չափով	երկու աշխատանք ային ժամվա ընթացքում բազային տուրքի 60-ապատիկի չափով	
2) անշարժ գույքի միավորի կամ դրա որևէ մասի նկատմամբ գրանցված և գործող իրավունքների, իրավունքների տեսակների և սուբյեկտների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման համար	երրորդ աշխատանք ային օրը բազային տուրքի 2-ապատիկի չափով	երկրորդ աշխատանք ային օրը բազային տուրքի 4-ապատիկի չափով		
3) անշարժ գույքի միավորի կամ դրա որևէ մասի նկատմամբ գրանցվածև գործող իրավունքների գրանցման համար հիմք հանդիսացող փաստաթղթերի անվանումների	երրորդ աշխատանք ային օրը բազային տուրքի	երկրորդ աշխատանք ային օրը բազային տուրքի		

ու վավերապայմանների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման համար	2-ապատիկի չափով	4-ապատիկի չափով		
4) անշարժ գույքի միավորի կամ դրա որևէ մասի նկատմամբ գրանցված և գործող իրավունքների սահմանափակումների և դրանց կիրառման համար հիմք հանդիսացած փաստաթղթի վերաբերյալ տեղեկատվության տրամադրման համար	երրորդ աշխատանքային օրը բազային տուրքի 2-ապատիկի չափով	երկրորդ աշխատանքային օրը բազային տուրքի 4-ապատիկի չափով		
5) անշարժ գույքի (հողամասի) և ամրակայված գույքի ընդհանուր նկարագրի վերաբերյալ տեղեկատվության տրամադրման համար	երրորդ աշխատանքային օրը բազային տուրքի 2-ապատիկի չափով	երկրորդ աշխատանքային օրը բազային տուրքի 4-ապատիկի չափով		
6) միևնույն սուբյեկտին որևէ իրավունքով պատկանող գույքի առկայության (անկախ գույքի քանակից) վերաբերյալ տեղեկատվության տրամադրման համար	երրորդ աշխատանքային օրը բազային տուրքի 2-ապատիկի չափով	երկրորդ աշխատանքային օրը բազային տուրքի 4-ապատիկի չափով		

7) անշարժ գույքի միավորի վերաբերյալ այլ տեղեկատվության տրամադրման համար	երրորդ աշխատանքային օրը բազային տուրքի 2-ապատիկի չափով	երկրորդ աշխատանքային օրը բազային տուրքի 4-ապատիկի չափով		
8) Բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքում առկա առանձին գույքային միավորների սեփականատերերի վերաբերյալ տեղեկատվության տրամադրում	երրորդ աշխատանքային օրը յուրաքանչյուր առանձին սուբյեկտի համար բազային տուրքի չափով	երկրորդ աշխատանքային օրը յուրաքանչյուր առանձին սուբյեկտի համար բազային տուրքի 2-ապատիկի չափով		
9) գույքի միավորի կադաստրային արժեքի և դրա ամփոփ հաշվարկման վերաբերյալ ձևաթղթի տրամադրում	երրորդ աշխատանքային օրը բազային տուրքի 2-ապատիկի չափով	երկրորդ աշխատանքային օրը բազային տուրքի 4-ապատիկի չափով		

10) կադաստրային գործի փաստաթղթերի լուսապատճեններ տրամադրելու համար				
ա. թղթային տարբերակով՝ յուրաքանչյուր էջի (A4 ֆորմատ) համար	երրորդ աշխատանքային օրը բազային տուրքի 10 տոկոսի չափով	երկրորդ աշխատանքային օրը բազային տուրքի 20 տոկոսի չափով		
բ. թղթային տարբերակով՝ յուրաքանչյուր էջի (A3 ֆորմատ) համար	երրորդ աշխատանքային օրը բազային տուրքի 20 տոկոսի չափով	երկրորդ աշխատանքային օրը բազային տուրքի 40 տոկոսի չափով		
գ. էլեկտրոնային տարբերակով՝ յուրաքանչյուր էջի համար	բազային տուրքի 1 տոկոսի չափով	բազային տուրքի 2 տոկոսի չափով		
11) անշարժ գույքի պետական ռեգիստրի պաշտոնական կայքէջի էլեկտրոնային համակարգի միջոցով ինքնաշխատ եղանակով տրամադրվող յուրաքանչյուր տեղեկատվության համար	բազային տուրքի 30 տոկոսի չափով			

(անմիջապես՝ անշարժ գույքի պետական ռեգիստրի պաշտոնական կայքէջում հասանելի վճարահաշվարկային համակարգի միջոցով վճարը կատարելուց հետո)				
12) անշարժ գույքի պետական ռեգիստրի պաշտոնական կայքէջի էլեկտրոնային համակարգի միջոցով ինքնաշխատ եղանակով տրամադրվող տեղեկությունների առկա յուրաքանչյուր փաթեթում ներառված տեղեկատվության համար (անմիջապես՝ անշարժ գույքի պետական ռեգիստրի պաշտոնական կայքէջում հասանելի վճարահաշվարկային համակարգի միջոցով վճարը կատարելուց հետո)	բազային տուրքի չափով			
13) Ընդ որում, եթե կադաստրային գործի փաստաթղթերից լուսապատճեններ տրամադրելու դիմումի բովանդակությունից կամ էությունից պահանջվում են սույն մասի 1-8-րդ կետերով նախատեսված տեղեկատվություն պարունակող փաստաթղթերի լուսապատճեններ, բացառությամբ կադաստրային գործի բոլոր փաստաթղթերի լուսապատճենների, ապա գանձվում են միայն այդ կետերով նախատեսված համապատասխան վճարները:				

Հոդված 2. Օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասում լրացնել նոր 72-րդ կետ հետևյալ բովանդակությամբ.

«72) Անշարժ գույքի պետական ռեգիստրի կողմից, ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից ներկայացված դիմումների հիման վրա կադաստրային քարտեզում անշարժ գույքի միավորի սխալների ուղղման համար գանձվում է պետական տուրք՝ բազային տուրքի 30-ապատիկի չափով:»:

Հոդված 3. Օրենքի 29-րդ հոդվածի վերջին 5-11-րդ և 13-14-րդ չհամարակալված պարբերություններն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 4. Օրենքում լրացնել նոր 29.1-ին հոդված հետևյալ բովանդակությամբ.

«**Հոդված 29.1. Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման և տեղեկատվության տրամադրման համար պետական տուրքի գծով արտոնությունները**

1. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման համար սույն օրենքով սահմանված պետական տուրքերը չեն գանձվում՝

1) քաղաքացիներին սեփականության իրավունքով պատկանող, մինչև 1998 թվականի մարտի 1-ը ձեռք բերված և 1998 թվականի մարտի 1-ից հետո չգրանցված, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով գույքային իրավունքները վերականգնված և 1998 թվականի մարտի 1-ից հետո չգրանցված բնակելի նշանակության անշարժ գույքի (բացառությամբ առանձին միավոր հանդիսացող ավտոտնակների) և գյուղատնտեսական նշանակության հողամասերի նկատմամբ սեփականության իրավունքի առաջին պետական գրանցման, այդ թվում՝ այդ գործընթացի ժամանակ պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի օտարման կամ վարձակալության պայմանագրերի՝ մինչև 2028 թվականի դեկտեբերի 30-ը պետական գրանցման դիմում ներկայացնելու դեպքում դեպքում,

2) Հայաստանի Հանրապետության իրավունքների պետական գրանցման դեպքում:

2. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում գույքի նկատմամբ սահմանափակում կիրառելու լիազորություն ունեցող իրավասու մարմիններն ազատվում են սահմանափակման պետական գրանցման տուրքի վճարումից:

3. Ֆիզիկական անձինք կամ Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմիններն իրենց գույքի կամ գույքային իրավունքների մասին հայցվող՝ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքի 32-րդ հոդվածի 5-րդ մասի 2-7-րդ և 9-րդ, սույն օրենքի 16-րդ հոդվածի 36.2-րդ մասի 10-րդ (մինչև 10 էջ պատճենահանված փաստաթղթերի մասով, ինչպես նաև սույն օրենքի 16-րդ հոդվածի 36.2-րդ մասի 10-րդ կետի «գ» ենթակետով նախատեսված էլեկտրոնային տարբերակով կադաստրային գործն ամբողջությամբ) կետերով տեղեկության համար ազատվում են տեղեկատվության տրամադրման համար սույն օրենքով սահմանված պետական տուրքերի վճարից:

4. Անշարժ գույքի պետական միասնական կադաստրի տվյալների մասին տեղեկատվությունը, բացառությամբ միասնական տեղեկատվության, Հանրապետության նախագահի աշխատակազմին, վարչապետի աշխատակազմին, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմին և պատգամավորներին, Հայաստանի Հանրապետության պետական կառավարման համակարգի մարմիններին, Հայաստանի Հանրապետության մարզպետարաններին, դատարաններին, Հայաստանի Հանրապետության դատախազությանը և քրեական վարույթի հանրային այլ մասնակիցների, օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմիններին, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին, Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատին, ինքնավար մարմիններին և անկախ պետական մարմիններին, Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանին, հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարին տրամադրվում է անվճար՝ Հայաստանի Հանրապետության օրենքով իրենց վերապահված լիազորությունների իրականացման համար: Պետական կառավարման մարմիններին սույն մասով սահմանված կարգով տրամադրված տեղեկատվությունը, ինչպես նաև կադաստրային, տեղագրական կամ հողաշինարարական քարտեզները կարող են վերջիններիս կողմից փոխանցվել այլ անձանց միայն Կառավարության որոշման հիման վրա, որի դիմաց անշարժ գույքի պետական ռեգիստրին հատկացվում է համապատասխան փոխհատուցում: Սույն մասով նախատեսված տեղեկատվությունը, բացառությամբ միասնական տեղեկատվության, այլ անձանց տրամադրվում է անվճար

միայն «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասով և 8-րդ հոդվածի 3-րդ մասով, ինչպես նաև այլ օրենքով սահմանված դեպքերում:

5. Սույն հոդվածով սահմանված տեղեկատվության տրամադրման արտոնությունները, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված ֆիզիկական անձանց մասով դեպքերի, չեն տարածվում սույն օրենքի 16-րդ հոդվածի 36.2-րդ մասի 11-րդ և 12-րդ կետերով սահմանված տեղեկատվության տրամադրման վրա:

6. Սույն հոդվածի 1-ին և 3-րդ մասերով սահմանված արտոնությունները չեն տարածվում սույն օրենքով սահմանված՝ արագացված կարգով ներկայացված դիմումների վրա:

7. Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկերում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերում գտնվող անշարժ գույքերի նկատմամբ իրավունքների պետական գրանցման համար սույն օրենքի 16-րդ հոդվածի 36-րդ և 36.2-րդ կետերով սահմանված վճարները գանձվում են 50 տոկոսի չափով:

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հանրապետության նախագահ Վ. Խաչատուրյան

ՀՕ- -Ն

Երևան 2026թ.